

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Ք օ ն № 253:

ՄԵԼԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեղումով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Ե Ք օ ն № 253:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ապարդիւն ջանքեր. Գերմանիան և հայոց հարցը. Մի թիւիւր մօլայի կարծիքը Թիֆլիսի մասին. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ վերին-Ազգութիւն. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բոլշակովից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՊՈՐՏԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից:

ԱՊԱՐԳԻՒՆ ԶԱՆՔԵՐ

Վերջին ժամանակներս մեր հոգեւորականութեան մէջ նկատվում է մի ձգտում՝ փոխել մինչև այժմ եղած կանոնադրութիւնները:

Ճիշդ է, մինչև այժմ դեռ ոչ մի կանոնադրութիւն չէ փոխված, բայց աչքի առած ունենալով այն հանգամանքը, որ կանոնադրութիւնների փոփոխութեան մասին խօսում են այն ժամանակ միայն, երբ իշխանութեան այս կամ այն միջամտութիւնը դիմադրութեան և բողոքների է հանդիպում, կարելի է դադարեցնել կանոնադրութեան, որ այդ փոփոխութիւնները ձգտում են նպատակ ունեն սահմանափակել ժողովրդական աւանդական իրաւունքները և նրանց տեղ դնել նորերը, որոնցով կարելի լինէր սրբազանքները այն անարդար միջամտութիւնը, որ այժմ կրում է միայն կամայականութեան և օրինաւորութեան կնիքը:

Այդ ձգտումը բողոքով օտար է մեր եկեղեցու ժողովրդական ոգուն, օտար է այն բոլոր աւանդութիւններին, որ թողել են մեր ժողովրդի ականաւոր գործողները անցեալում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՆ ԲԻՍԻՍ

Կ. ՊՕԼԻՍ, յունիսի 27-ին

Վերջին անգամ ծանուցադիր մը տուած ըլլալու լուրը ոչ ստուգեցաւ, ոչ հերքեցաւ. ճիշդը սա է որ լուրը Սոլդատի բացարձակօրէն յայտարարած է Լոնտոնի օսմանեան դեպքանին, թէ անգլիական կառավարութիւնը չի կրնար ետ առնել իր ծրագիրը. հասարակաց կարծիքը այն ատիճանի գրգռուած է, որ Սոլդատին կառավարութիւնը եթէ կուզէ այդ գրգռումին հանդարտիլը, պէտք է ինքնաբերաբար ընդունի և գործադրէ ներկայացուած ծրագիրը:

Այս աղաքարարութիւնը բաւական տպաւորութիւն մը առաջ բերած է թիւրք չըջնալիներուն վրա և իրր հետեանք կը կարծուի, որ այս մէկ երկու օրուան մէջ Դուռը պատասխան մը պիտի տայ: Կը լսուի թէ այդ պատասխանը վերջնական պիտի ըլլայ և զոհացուցիչ, մանաւանդ որ Պոլսկարիայէն ալ հասած լուրերը ծանր ըլլալով թիւրք կառավարութիւնը կուզէ վերջացնել հայոց խնդիրը: Մենք անքան թերահաւատ ենք թիւրք կառավարութեան իմաստութեան վրա, որ այս անգամ ալ եթէ անհաւատ ըլլանք՝ պէտք չէ մեզի մեղադրել:

Աչքի դարձող իրողութիւնը այն է, որ Շաբիր փաշա դեռ հաս կը մնայ և իր պաշտօնավայրը երթնելու ընաւ. նշան մը ցոյց չի տար: Նախորդ նամակով գրածս հաստատուեցաւ. երեք դեսպանները չեն ուղած Շաբիրը ընդունել այն տիտղոսով, որով կը ներկայանար: Շաբիր ինչն ալ բաւական պղտիկ մնացած է:

Բայց մեծ միջոցաւ մը ունի. Ազարեան պատրիարք փութաց այցելութիւն տալ Շաբիրին. նորհաւորեց զինքը և յայտարարեց, թէ ինչ որ ձեռքէն կուգայ պիտի ընէ, ամեն դիւրութիւն

Այդ ձգտումը դէմ է և այն պետութեան օրէնքների ոգուն, որն աշխատում է ամեն տեղ տարածել տեղական ինքնագործունէութեան, ինքնավարութեան սկզբունքը, որը վաղուց մտցրել է իր պետութեան մէջ գեմատիօ ինքնավարութիւնը, իսկ մեր երկրում, կոլկասում՝ քաղաքային ինքնավարութիւնը:

Մեր եկեղեցու անձնուէր և մեծ գործողները միշտ դէմ են եղել այն ուղղութեան, որ կրեականութեան անունով ծնվեց և զարգացաւ կաթոլիկ հոգեւորականութեան մէջ և որի դէմ ամբողջ դարեր կատաղի կռիւ մղեց արեւմտեան եւրոպայի լուսաւորված մասը:

Մեր եկեղեցին և մեր ժողովուրդը կրեականութիւն չեն ընդունել և միշտ մաքաւ են նրա դէմ այն բոլոր մեծանուններում, երբ խաւար ոյժերը հասարակաց գործերի զուլ և նախնական ճշմարտութիւնները և ծրագիրները պատուաւ ժողովրդին:

Ներկայ դարու ընթացքում մեր նոր արթնացած հասարակական կեանքը արդէն փառաւոր ապացոյցներ է տուել, թէ որչափ ժողովուրդը զգայուն է դէպի այն բոլոր խաւար և նեղ ձգտումները, որոնք ձգտում են կապանքներ դնել ժողովրդական ընտրական գործի և ժողովրդական ներկայացուցչութեան վրա:

«Հիւսիսփայլ» կատաղի կռիւ, Շուշեցիների՝ Շանշեանի ժամանակ՝ ցոյց տուած դիմադրութիւնը, մեր վերջին քսան տարվայ կռիւների ցոյց են տալիս, որ ապարդիւն է անգոր են այն բոլոր փորձերը, որ ժամանակ առ ժամանակ առաջ են բերում մեր խաւարամիտները, և որ նրանց բոլոր

պիտի ընծայէ, իր եկեղեցականներուն չըբարեբախտութիւն պիտի դրկէ, որպէս զի քննիչ փաշային տրամադրութեան ներքե զանաւոր: Ազարեան պատրիարք իր գովաբանութիւնները չուսլած է Շաբիրին, յայտարարելով թէ Սոլդատը այնպիսի ընտրութիւն մը ըրած է զինքը՝ Շաբիր փաշան անուանելով այդ մեծ պաշտօնին, որ բոլոր ժողովուրդները երախտապարտ պիտի մնան:

Շաբիրի պատասխանը թէն քաղաքավարի, բայց շատ ցուրտ եղած է: Յոյժ, ստորնացած չողորմութիւնը ամեն ատեն ախորժալուր է:

Ազարեանի այցելութիւնը նոր դաւաճանութիւն մըն է. մինչև եւրոպական դեսպանները, մինչև Հայոց պատրիարքարանը կը բռնեն սպասողական դիրք մը, ինչ նշանակութիւն ունի Ազարեանին այս փութացած այցելութիւնը: Իր կարծ խեղճութիւնը կը կարծէ թէ միշտ անջատուելով հայոց պատրիարքին, կրնայ թիւրք կառավարութեան հաճելի ըլլալ:

Կաթոլիկ հայերը անհաւատ պէս զայրացած են Ազարեանի այս նոր վատութեան համար: Կը ցատկի որ պահ մը կարծեցիք թէ Ազարեան խեղճ գլուխը ժողուած է: Այդ մարդը խաբել է զատուրիչ բան չընէր. այս ձգտութիւնը միանգամ ընդմիջ միտք պահելու էք և խաբուելու չէք:

Այս խաբեանք, որ բանտին մէջ պահել տուաւ տարիներով Պետրոս Մարիմեանը, որուն դէմ վրէժ ունէր, վառն դի այդ երիտասարդը կաթոլիկ հայ ըլլալով միացած էր լուսաւորչական հայերուն, հիմա Ազարեան, երբ իմացաւ թէ Մարիմեան Աքեայէն Պոլսի կը բերուի, կարծեց թէ նա կազատուի. ուստի այդ աղաքարարութեան փութեղ ուղեղ իրեն վերագրել և անա փութաց ամեն տեղ հաշակել որ իր աղաքարարութեանը աղաքարարը և Մարիմեանը աղաքարար: Մինչև իսկ համարձակեցաւ որոտասանանան հայերէն թերթի մը մէջ հրատարակել տալ իր այս «քաջագործութիւն»: Բայց անա Մարիմեան ոչ միայն չազատուեցաւ, այլ նաև Պոլսի բերուելով բանտը նետուեցաւ, խիստ հակողութեան ներքե մնացած:

Չանքերը մի օր հանդիպելով մի ուսեղ դիմադրութեան, օրը կը ցնդեն և անհետանան կը մնան, ինչպէս ամեն մի փորձ՝ աւանդական ժողովրդական իրաւունքների դէմ:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Գերմանական կառավարութեան մինչև այժմ խաղացած դերը և գործ դրած քաղաքականութիւնը հայոց հարցի մէջ շատ մեկնութիւնների առիթ է տալիս: Ոմանք այն կարծիքի են, թէ Գերմանիան է այն պետութիւնը, որը ծածուկ խրախուսում է սոլդատին դիմադրելու Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի պահանջներին և թիւրքաց կառավարութիւնը, վստահ Գերմանիայի աջակցութեան վրա, թող է տալիս իրան ձգձգել գործը և յանդուգն պատասխաններ տալ:

Ուրիշները կարծում են, որ թէ Գերմանիան պաշտօնապէս չէ միացած երեք պետութիւնների հետ հայկական ընթացիկների ծրագրի իրագործման հարցում, բայց նա շարունակ խորհուրդներ է տալիս սոլդատին ընդունել այդ ծրագիրը, և այդպիսով անկողնակի կերպով նպաստում է երեք պետութիւնների գործ դրած ջանքերին և աջողութեան:

Ճիշդ է, Գերմանիայի քաղաքականութեան նախկին ղեկավար իշխան Քիսմարկը իր հակամարդկային և հակաքրիստոնէական ձգտութիւնները առաջ տարաւ մինչև այն աստիճան, որ մի տեղ ասաց, թէ մի պրուսացի զինուորի արիւնը աւելի թանկ է, քան ամբողջ Հայաստանը, բայց զօրակար թէ Վիլհելմ II կայսրի կառավարութիւնը հետեւի այդ պարսաւելի քաղաքականութեան: Չէ՞ որ

Ազարեան հիմա չի գիտեր ինչ ընելու: Յուսանք թէ զօրակար Գաբրիէլեան ասկէ ետքը աւելի ուշադրութեամբ կը հիւրընկալէ Ազարեանի վերաբերեալ ջատագովականները. թէ և վերապահութեամբ հրատարակած էր նամակը, բայց և այնպէս չախորժեցանք:

Պոլսոյ կաթոլիկ հայ հասարակութիւնը Ազարեանին ըրաւ անպիսի նախատիք մը, որուն նըմանը շատուց է վայելած չէր: Պոլսոյ Օրթոդոքս թաղերի մէջ կը ընակի զարգացած և աղքատներ կաթոլիկ հայերու նշանաւոր մէկ մասը: Ունին եկեղեցի մը Լուսաւորչին նուիրուած. ամեն տարի Ազարեան պատրիարք կը հրաւիրուի այդ տօնին երթնել Օրթոդոքս և պատարագել: Այս տարի ժողովուրդը չուղեց որ Ազարեան գայ և պատարագէ: Ի՞նչ ընեն եկեղեցականները: Եւ անա եկեղեցիին մեծաւորը՝ Տ. Եղուարդ կերթայ «պաշտօնապէս» հրաւիրել. բայց միւս կողմէ քաղաքավարական կը հասկնան որ եթէ զաւուր ըլլայ, հետեանք գէշ պիտի ըլլայ, ցոյցի մը վայել կայ: Եւ արդարև ժողովուրդը պատրաստուել էր սուսուր: Այս հարուածը, որ ուղղակի զարգացած ժողովրդէն կուգար, շատ ծանր եղաւ իրեն:

Ազարեանի պատմութեանց հետ դաւաճանութեան գլուխն է որ կը բացուի, ուրեմն չարուստ կենք:

Մկրտիչ Թիւթիւնջիէֆ, որուն կերած գնդակներուն պատմութիւնը հաղորդած եմ, չը կրցաւ աղաքիլ առած վերքերէն, այսօր ճողեց և վաղը պիտի թաղուի. կը վախցուի որ նոր դէպքեր պատահին յուզարկաւորութեանը առթիւ: Այդ թշուառականին մահը սարսափելի ահով կը պատէ Պոլսը:

Այդ ասէն անշուշտ բաժին մը պիտի ունենան այն չեկեղեցականները, որոնք կը շարունակեն դաւել կրիկիոյ կաթողիկոսական ընտրութեան առթիւ: Այս կէտին վրա հաւատացէք, որ ամեն

Գերմանիան ևս ստորագրել է Բելլինի դաշնագրին և իրրե այդ դաշնագիրը ստորագրող վեց պետութիւններից միւրը, միջազգային որոշ պարտաւորութիւններ ունի կատարելու. նա չէ կարող առանձնանալ, իրան հետեւ պահել և դաշնագրի իրագործումը թողնել միւս պետութիւններին: Այդ չէ կարող անել Գերմանիան, քանի որ նա կամենում է միշտ մնալ մեծ պետութիւն և ներգործական դեր խաղալ Արեւելքի գործերում:

«Kölnische Zeitung» լրագիրը, որ համարվում է կառավարութեան շատ մօտ թերթ, հրատարակել է մի յօդուած, որ, անտարադիշ, ներշնչված է Բելլինի կաթիւնէտից: Նա ասում է, որ Կ. Պոլսի մի քանի հեղինակաւոր շրջաններում այն կարծիքն է տիրապետում, թէ Գերմանիան թող չի տայ, որ խիստ միջոցներ ձեռք առնվեն Թիւրքիայի դէմ հայկական ընթացիկների մերժման դէպքում: Բայց ընդհակառակը, շարունակում է լրագիրը, Գերմանիան համաձայնութիւն պիտի տայ այն բոլոր վճիռներին, որ կը կայացնեն Ռուսաստանը և Անգլիան:

Բ. Դուռը այն յոյսն ունի, թէ մեծ պետութիւնների մէջ կը ծագի անհամաձայնութիւն և այդպիսով Թիւրքիան կազատվի իր ներկայ ծանր դրութիւնից: Սակայն այդ հաշիւը, գէթ Գերմանիայի վերաբերմամբ, սխալ է: Գրութիւնը խիստ կրիտիկական է: Գերմանիան, կրկնում ենք—վերջացում է լրագիրը իր խօսքերը—համաձայնութիւն կը տայ այն բոլոր վճիռներին, որ կը կայացնեն Ռուսաստանը և Անգլիան, բայց թէ ինչ կանի ինքն, երբ այդ երկու պետութիւնների մէջ անհամաձայնութիւն ծագի այս

նաժանր դաւաճանութեամբ է որ կը գրեմ և ամեն անգամին ալ գրիւմ չուղելով չարժեքի. խիստ տխուր տպաւորութեան մը ներքե ենք ամենքս ալ: Ահա հայ եկեղեցականներ, որոնք բանտերն էին. ամենուս սիրտը իրենց հետն էր: Պատրիարքն ու դեսպանները պահ մը մոռցան աշխարհական կտրիճները, որոնք սոսկալի տառապանքներու ենթակալ են և մտածեցին միայն եկեղեցական բանտարկեալներուն. ազգը կողջագուրէ զիրենք, ամեն կողմ ձեռքէ ձեռք կը խլեն. ժողովուրդը գոռաղաղանդ կը վազէ իրենց պատարագին. ամեն հանդէսի կը հրաւիրուին. ամենէն կղերատեացը կուզէ ասոնք միտուել ու ձեռքերնին համբուրել, և անա յանկարծ ամենաստորին վատեր դուրս կուգան, ամենայնիւր դաւաճաններ, փրկուումը սոսկալի է. և ոչ որ սիրտ ունի անոնց վրա խօսելու:

Այս դաւաճաններու գլուխն է Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան, վրթխարի եկեղեցական մը, որ մէկ երկու տարի առաջ չղթալակալ Պոլսի բերուեցաւ կրիկիայէն. ժամանակաւ ծանօթ եղած ըլլալով Նազըմի հետ, աղաւտ արձակուեցաւ. բայց և այնպէս համակրութիւն գտաւ. ոչ որ իրեն դէմ կը խօսէր, վառն դի վատութիւն մը ըրած չէր. շատ սիրալիլ ընդունելութիւն գտած էր: Միայն գիտողները կը խօսին թէ ոստիկանութեան դուռը շատ կը յաճախէ, երբեմն ալ ասկէ անկէ դրամ կը ստանայ, բանտարկեալ ազատելու համար:

Այս եկեղեցականները դատական գործերու նախարարին ախին մէջ անգիտակից գործիք մը դարձած կը դաւեն: Գրեցի արդէն թէ երկուշաբթի աղերսագիր տուած են թիւրք կառավարութեան, խնդրելով որ կրիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը բեկանի իր պարօրինաւոր: Կատական գործերու նախարարութիւնը այդ աղերսագիրներուն օրինակները զրկած էր պատրիարքարան, առատախան պահանջելով մանաւանդ անոնց շարունակականութեանը համեմատ բեկանում՝ կրիկիոյ կաթողիկոսական ընտրութեան: Պատրիարքարանէն չէր

կամ այն կէտի վերաբերմամբ,—այդ արդէն խիստ կարևոր հարց է:

Կիսապաշտօնական թերթի այդ խօսքերը ցոյց են տալիս, որ Գերմանիան չի յապա- ղի իր ազդեցութիւնը գործ դնել սուլթա- նի վրա և ստիպել նրան ընդունելու հայկա- կան ընթացիկ ծրագիրը: Այդպիսով ու- ռենքն, նա կը հետևի իտալիային, որը, ար- քէն, ինչպէս գիտենք, սկսել է ներգործա- կան դեր խաղալ հայոց հարցում:

Մենք է բերլինի դաշնագիրը ստորագ- րող վեց մեծ պետութիւններէն միայն մի- նը—Աւստրո-Ունգարիան, որը նոյնպէս տրա- մադիր է միանալ Գերմանիայի և իտալիա- յի հետ և արդէն արել է որոշ քայլեր, խորհուրդ տալով սուլթանին ընդունել ծրա- գիրը:

Եւ տարակոյս չը կայ, որ Թուրքիայի այն յոյսը և այն առարկութիւնը, թէ քանի որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետու- թիւններէն միայն երեքն են պահանջներ անում, իսկ երեքը չէզոք են մնում, ինքն կարող է մերժել այդ պահանջները, բոլո- րովին կը խորտակի եւրոպական վեց մեծ պետութիւնները միասնամուռ և զօրեղ կամ- քի առաջ:

ԹԻԻԻԲ ՄՈՒԼԱՅԻ ԿԱՐԾԻՐԸ ԹԻԻԻԲԱՅԻ ՄԱՍԻՆ

Թէ որ աստիճանի թուառ է Թուրքիայում ազ- րող ժողովուրդների վիճակը, այդ ցոյց է տալիս մի թիւրք մօլլայի գործիւնը, որտպմած է Լօն- ղոնի «Pall Mall Gazette» լրագրի մայիսի 30 հա- ճարում, որից մենք անում ենք հետեւեալ քաղ- ւածքները:

«Հայկական յանձնաժողովը,—գրում է մօլլան,—պէտք է իր ծրագրած ընթացիկների մէջ մտցնէ բարեփոխութիւններ ոչ միայն Վանի երկրագործ հայերի, կամ Թուրքիայի որ և է մասում ընա- կողմէրէն չափել, այլ և իմ դժբախտ հայրե- նիքի մահմետական ժողովուրդի վիճակի մէջ: Մենք շատ աւելի վատ վիճակի մէջ ենք, քան մեր քրիստոնեայ հայրենակիցները: Մենք նրանցից աւելի քան կոկնդարապետի հարկեր ենք վճարում, և բացի դրանից տալիս ենք զինուորներ—կենսիկ հարկ—որից ազատ են նրանք:

«Իմ կարծիքով մենք, մահմետական և քրիս- տոնեայ հպատակներ, պէտք է միացած լի- նենք» ընդհանուր ոյժով մեր երկիրը պաշտպա- նելու:

պատասխան չէր գրուած, երբ երէկ դատական գործերու նախարարութիւնէն հասաւ ուրիշ պաշ- տօնագիր մը, որ կը մտցնէ առաջինները:

Համառօտեմ պարտականութիւնը:

Բողոքարկու եկեղեցականները կը յայտարա- րեն թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը չի զը- անուիր Պօլսոյ պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ, հետեւեալ արտաբերել կաթողիկոսական ընտրութեան մէջ ու և է մասնակցութիւն ունե- նալու չէ Պօլսոյ պատրիարքարանը: Թէ՛ ընտր- ւող անձը «ուղղամիտ» չէ—այսինքն թէ՛ կառա- վարութեան անհաճոյ խոսքերը մըն է,—թէ՛ Պօլսոյ պատրիարքարանն ալ «ուղղամիտութեան» տրպաղ չէ եղած: Թէ՛ Կիլիկիոյ կաթողիկոսու- թիւնը երբ բոլորովին անշատ մնայ Պօլսոյ թիւնը երբ բոլորովին անշատ մնայ Պօլսոյ պատրիարքութիւնէն, կիլիկիցիները բոլորովին խաղաղ ու հանգիստ մնալով ու և է դժուարու- թիւն չը պիտի յարուցանեն օսմանեան բարե- խնամ կառավարութեան: Թէ՛ պատրիարքարանը ըմբոստութիւնը մայն աստիճան առաջ տարած է, որ և ոչ իսկ կը հաճի պատասխան մը տալ կա- ռավարութեան կողմէ այս խնդրին համար գըր- ւած պաշտօնագրերուն:

Կատական գործերու նախարարը հաղորդելով կիլիկիցի չեկեղեցականներուն այս բողոքա- գիրը, կը պահանջէ որ Ալեքսանդր ընտրու- թիւնը բեկանի և այս եկեղեցականները Կիլի- կիա վերադառնալով նոր ընտրութիւն կատարեն իրենց վաղեմի սովորութեան համեմատ:

Պատրիարքարանը գործնական պատասխաններ տուաւ: Նախ և առաջ երէկ, յուլիս 26 երկու- շաբթի, Կոստանկան և Բաղադական ժողովները պատրիարքարանի մէջ նիստ ըրին, նախագահու- թեամբ Պատրիարքին և կարգաւ ընտրութեան տեղեկագիրները, զոր ստորագրած էին Առաջա- գումարուած ընտրական ժողովին անդամները, օրինաւոր գտան կատարուած ընտրութիւնը, վա- ւերացուցին զայն և որոշեցին Ազգային ժողովը գումարել և ընտրութեան վաւերացումը խնդրել

նեղու. բայց ծերունի փաշաները հարկա- հաւատակ են այսպիսի մի միջոցի, որ նը- րանց իշխանութիւնը պիտի սահմանափակէ: Յե- տոյ՝ մենք հնարաւորութիւն չունենք զիմելու մասնակցի, զեսպանատները և հիւստոտարան- ները՝ մեր խնդիրն արտայայտելու համար: Մենք զրկված ենք նաև եւրոպական ազգերի համակ- րութիւնից, որոնք մեզ չիմիտում են այն իշխա- նութեան հետ, որ հաւատարմութիւն չունի ինչ- պէս թիւրք, նոյնպէս և այլապէս հպատակներին:

«Եթէ ծանօթ լինէր մեր վիճակը, եթէ քննվէին այն սոսկալի եղելութիւնները, որոնք բազմաթիւ մահմեդական կանանց այրիացնում են և բազմա- թիւ մահմեդական երեխաներ որը են թողնում՝ զայրույթի և սարսափի այնպիսի աղաղակ կը բարձ- րանար, որ կը խնդէր հայոց սարսափների միա- կողմանի աղաղակը: Թող Կարգանքի ներուցը, Սե ծովը և Արաբիայի անապատները խօսեն, թէ ազատութեան դուռ համար քանի քանի մահ- մեղականներ են դո՛ւր դնացել և աքաղակել: Վայն եկել է այն թիւրքին, որ կը համարձակվի որ և է կարծիք յայտնել ի նպատակ Անգլիայի կամ յօ- գուտ որ և է վարչական բարեփոխութեան: Այն աստիճան մենք ճշնված ենք, որ այսօր անսո- վոր բան չէ լսել մահմեդականներին աղօթելիս՝ որ չուտով գազ մեղ տիրէ մեր զորանք թշնա- մին, քան մենք չարունակենք մնալ այս անհա- կան բռնակալութեան տակ, որ ներշնչված է սպանութեան երկիւղով և ամեն ազգի լրտեսնե- րով, այնպէս որ «Բարձրագոյն Կրօն» պաշտօ- նական կառավարութիւնը լոկ անուն է դարձել, որի տեղը բռնել է սուլթանի պալատի ճիւղ- կերների անպատասխանատու տէրորդը:

«Զեն կարող արդեօք հայկական յանձնաժողովին մասնակցող Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսի- այի զեկեղեցականներ ընթացիկներին այն ուղղութիւնը տալ, որ սրանք գործադրելի լինեն ամբողջ պետու- թեան մէջ, որ մահմեդական ազգաբնակչութիւնն էլ, քրիստոնեաների և հրէաների հետ, ձայն ու- նենայ մի պարզամտեամբ, որպիսին փորձեց հա- տատել Միջնաւ փաշան: Թող մասնաժողովը քննութեան ենթարկէ նաև թիւրքերի անտանելի գրութիւնը և արքայութեամբ հետազօտէ նրա իսկական աղբիւրները: Այն ժամանակ նա կը գտնէ թէ ինչն է առաջ բերել այն կոտորածնե- րը, որոնք այնքան ատելի են թէ քրիւրքերի և թէ թիւրքերի ի բնէ կարեկից հոգում, կը գտնէ պատճառը, թէ ինչու ենք մենք նախանձուս Անգ- րոս:

Ըստ օրինի՝ Հետեւեալ, Պատրիարքը այս շաբ- թու Բ. Կրօն պիտի իմացնէ թէ Ազգային ժողովը գումարելու պէտք կայ: Ահա խնդիր մը, որ բա- ւական դժուար կացութեան մէջ պիտի ձգէ Բ. Կրօնը:

Մինչ երկուշաբթի օր պատրիարքարան կը հասնէր վերադիմալ պաշտօնագիրը, նայն պահուն պատրիարքարանէն ալ կը զրկուէր պատասխա- նագիր մը՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերա- բերեալ նախորդ պաշտօնագրերուն: Այդ պա- տասխանագրին մէջ Պատրիարքը կըսէր թէ Կի- րիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը կատար- ւել է համաձայն կանոնագրի մը, որ պատրաստ- ւած էր 1871-ին և կայսերական իրաւունքով վա- ւերացուած էր, ինչպէս որ ժամանակին պատրի- արքարանին ծանուցած էր Մեծ-Նպարաւոս Ալի փաշա: Այդ կանոնագրին համեմատ կատարուած էր հանգուցեալ Տ. Մկրտիչ կաթողիկոսին ըն- տրութիւնը. իսկ եթէ բողոքարկու եկեղեցական- ները այս ընտրութեան չը մասնակցեցան, յայտնի է թէ այնպիսի պատճառներով է, զոր նախարա- րը չատ աղէկ գիտէ: Ի վերջոյ Պատրիարքը կը յայտարարէ, որ այդ եկեղեցականները եթէ ու և է զիտողութիւն ունէին, պէտք էր որ խնդրը ներկայացնէին ուղղակի պատրիարքարանին:

Ինչպէս կը տեսնենք, կառավարութիւնը Կիլի- կիոյ կաթողիկոսութեան խնդր մը կը յարուցա- նէ, նայն անոր համար որ պատրիարքարանը զըս- ղեցնէ, յետոյ Ալեքսանդր եպիսկոպոսի պէս ա- նախորդ մարդ մը այդ ակնոյն վրա չը բազմի: Եթէ զատ հին քաղաքականութիւն մը կայ, այն է Կիլիկիան անջատել Պօլսոյ պատրիարքութիւնէն, տկարացնել թէ այդ ակնոյն և թէ Պօլսոյ պա- տրիարքութիւնը, և այդ բաժանումով աւելի դի- րին ճնշել կիլիկիցիները:

Սիւրի փաշա 1880-էն 82 այս քաղաքականու- թեան հետեւեցաւ և հիմա երբ նորէն գործի գլուխ կանգնի, հին խնդիրը կը բանայ, բայց ասպանդար պիտի յաղթուին Առ. այժմ թէն

լիայի կառավարութեան տակ եղող մահմեդա- կանների բախտին: Յոյս ունեմ, որ դուք գործ- կը դնէք ձեր հզօր ազդեցութիւնը նոյնպէս ի նը- պատ իմ հաւատակիցներին, որով այդ միլիո- նաւոր, խօսելու հնարաւորութիւնից զրկված ժո- ղովրդի մշտական երախտագիտութիւնը կը ստա- նալը:

«Եւրկայ կառավարութեան ժամանակ, որ ծայրէ ի ծայր ապականված ու վատ է՝ ճշնված քրիստոնեան այսպէս թէ այնպէս կարողանում է դիմել և բողոքել իր եւրօպացի եղբայրներին, բայց ում դիմէ ճշնված թիւրքը՝ իր վիճակին դարման խնդրելու, երբ բացի ուրիշ նեղութիւն- ներից, հայոց հոգեւոր իշխանութիւնն էլ սուլ- թանի պալատի հետ միացած, կողոպտել է նոյն իսկ թիւրքաց ստացուածքները՝ սուլթանի սե- փական գանձարանը հարստացնելու համար» (2):

Որ հեղինակ մօլլան՝ հայոց վիճակը Թիւրքիա- յում աւելի բախտաւոր է համարում, քան տաճիկ- ներինը, դա մեզ համար պարտաւորական չէ. բայց ինչ որ նա ասում է իրանց, տաճիկների ճշնված գրութեան մասին՝ շատ հաւանական է և ուշադ- րութեան արժանի:

Ստ. Մ.

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒՎԸ

Պարզիկ «Echo de Paris» լրագիրը գրում է յունիսի 24-ից հետեւեալը. «Յայտնի է, որ Բ. Կրօնը հայկական ընթացիկների ծրագրի մասին տուած իր նոր պատասխանի մէջ ցանկութիւն է յայտնել, որ ծրագրի մի քանի կէտերը վիճաբա- նութեան և քննութեան ենթարկվին: Այժմ «Բեյ- տէրի» գործակալութիւնը հեռագրում է Կ. Պօլ- սից, թէ Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի զեկեղեցականների թարգմանները որքան պահան- ջել են մեծ-վիզիրից և արտաքին գործերի մի- նիստից որոշ կերպով ճշդել այդ կէտերը, սակայն նրանց պահանջը անկատար է մնացել:

«Որովհետեւ ոչ Սիւրի-փաշան, ոչ Թուրքիայի փաշան չը կամեցան այդ մասին իրանց կարծիք- ները յայտնել, զեկեղեցականները հեռագրեցին ի- րանց կառավարութիւններին նոր հրահանգներ խնդրելու համար: Կնիթաղիւմ է, որ այդ երկու բարձրաստիճան պաշտօնեաները անձնապէս հակ- ված են այն կարծիքին, թէ պէտք է խնդրել բա- րեկամարար կարգադրել, բայց ընթացիկների ծը- րագրին դիմադրելը առաջ է գալիս պալատից:

մեծ գայրոյթ կայ Կիլիկիոյ խնդրին նկատմամբ, բայց արդէ պատրիարքին օրով չենք կրնար վախ- նալ որ խնդիրը կրնայ լուծուիլ Կրօն հանձնքին համեմատ: Ուշագրաւ է որ երբ կառավարութիւնը ինք Պօլսի բերած է, բանտէ արձակուելէ յե- տոյ, այն եկեղեցականները, որոնք այսօր բո- ղոքարկու են և պահանջած է որ անոնք այլ ևս Կիլիկիա չը վերադառնան, հիմալ ելեր կամբաս- տանէ պատրիարքարանը, թէ այդ եկեղեցական- ներուն թող չէ տուած մասնակցել և ընտրու- թիւնը բեկանելու տեսչը այնքան զօրաւոր է որ յանձնառու կըլլայ կառավարութիւնը իրենց երկի- րը վերադարձնել այդ խոսքարար համարածները:

Պաշտօնագրերու չեղձակոյտին մէջ միւս կարե- ւոր խնդիրն է Սասունի սովեւններուն համար հանգանակութիւն ընելու արդիւրը, որու մասին նախորդ նամակովս մանրամասնօրէն գրած եմ: Պատրիարքը պատասխանելով դատական գործե- րու նախարարին կըսէ թէ Սասուն զրկուած դը- րամը «հաջափին» է. սովեւններուն հաց տալը պարտականութիւն մըն է. երբ օտարները Սա- սունի թշուառութեան համար ստակ կը հաւա- քեն, ինչպէս կարելի է որ հայ աղքատ անտարբեր մնայ: Եւ ապաքէն կառավարութիւնը յայտարա- րելով թէ ինք այդ կարօտներուն ստակ կը զրկէ, ինքն իսկ կընդունի թէ անօթութիւնը գոյու- թիւն ունի: Պատրիարքը կըսէ նաև թէ այս հան- ցանակութիւնը գրգռման միջոց մը չէ, վասնզի իր չիքաբերականներուն մէջ չէ ուղած ու և է ակնարկականութիւն ընել այն ցաւալի զեկեղեցուն, որոնք կառավարութեան քաջ ծանօթ են:

Այս պատասխանագիրը շատ տրամաբանական և ազգու է:

Մինչ այդ պատասխանը Կրօն կը զրկուէր, աստիճալ ալ ու և է միջոցով մինչև հիմա 8,000 բուսլի օգնութիւն զրկուեցաւ Սասունի և հե- տեւեալ զհետէ ալ պիտի զրկուի: Պօլսոյ մէջ հանգանա- կութիւնները կը շարունակուին:

«Ֆրանսիական զեկական պ. կամբօնը մի մը- տերմական խօսակցութիւն է ունեցել մեծ-վիզի- րի հետ և յայտնել է, որ երեք զեկականների մէջ կատարեալ համեղախօսութիւն է տրուում:

Չարմանալի է, որ մինչև այժմ Ֆրանսիական մամուլը չը կարողացաւ համոզվել, թէ սուլ- թանի և Բ. Կրօնի կողմից գործ գրած այդ անվերջանալի խաղերը անվում են այն նը- պատակով, որ մի կերպով կարողանան հայոց խնդիրը նորից գործի տակ՝ դնել, ըստ թիւր- քաց սովորութեան:

II

Լօնդոնի «Daily Graphic» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ սուլթանը մերժեց մեծ-վիզիր Սալիդ-փաշայի ներկայացրած նոր ծրագիրը՝ մի- նիստական և վարչական նոր փոփոխութիւնները մասին, այդ պատճառով սուլթանի և Սալիդ-փա- շայի յարաբերութիւնները բաւական լարվեցին: Գալով հայոց գործերին, հայկական նահանգներից հասած լուրերից երևում է, որ հայ ազգաբնակչու- թեան վիճակը անտանելի է, որովհետեւ նա չարու- նակ և անդադար ենթարկվում է դարձեալ նորանոր հարստահարութիւնների տեղական իշխանութիւն- ների կողմից, որոնք պահանջում են ծանր հար- կեր, մինչև անգամ մի քանի տարւանը միասին:

III

Ինչպէս հաղորդում են անգլիական լրագիրնե- րը, Տրապիզոնում մի թիւրք օֆիցէր անպատ- ւել է մի ֆրանսիայի ծովային օֆիցէրի: Ֆրան- սիական զեկական խափա բաւարարութիւն պա- հանջած լինելով Բ. Կրօնը չտալով է լրակա- տար գոհացում տալ, զրամական վարձատրու- թիւն տալով ֆրանսիացի սպային և պատժելով յանդուգն թիւրք օֆիցէրին:

IV

Բերլինի «Tageblatt» լրագիրը իր յուլիսի 4-ի համարում այն կարծիքն է յայտնում, թէ մակե- դոնական հարցը աւելի վտանգաւոր է Թուրքիա- յի համար, քան հայոց հարցը, ուստի և խորհուրդ- է տալիս Թուրքիային բաւարարութիւն տալ հա- յերին: Հայերը, ասում է լրագիրը, շատ գոհ կը մնան և կը շարունակեն առաջիկայ պէս հաւա- արմութեամբ ծառայել Թուրքիային և խաղաղ ապրել օսմանցիների հետ, որոնց հետ յարմար- վել են դարերից ի վեր, եթէ նրանց քաղաքա- կան սրայմանները փոքր ի շատէ բարեփոխու- թեան ենթարկվին: Բայց իրերի դրութիւնը այլ կը լինի Մակեդոնիայում: Մակեդոնիայի բոլորա- րէն:

Բայց ամբողջ Հայաստան անօթի է, երբ չուա- րուած կը տիրէ, ու ահա Սալիդ փաշա հրաման կը զրկէ ամեն բռնութիւն ի գործ դնել և յե- տամանց տուրքերը գանձել: Այդ Սալիդը, որուն «բարեկարգիչ» տիտղոսը կողքին տալ եւրօպա- կան թերթներն ունենք, Թուրքիայի ամենէն աւե- լի մոլեգին, չար նախարարներէն մէկն է: Մինչ տուրքերու գանձումը եղանակին համար բարե- կարգութեանց Մարգրին մէջ մասնաւոր տրամա- դրութիւններ կը դրուին, տեսէք Սալիդ ինչ հրա- հանգներ կը զրկէ նահանգներու և զեւս ատենը, որովհետեւ հրապարակաւ կը հրատարակուին մեղմացած են: Արդեօք ինչ պիտի ըլլան ձեռքի ներքէ՛ տրուած հրամանները:

Ահաւասիկ պատճէնը, լրագիրներէ քաղուած, եւսարքոսական հրամանագրին.

«Տուրքերու հաւաքում. Դեբթին գործերու նա- խարարին կողմէ բոլոր կուսակալներուն հրաման զրկուած է որպէս զի տուրքերուն գանձումը ան- խնամ չը թողուին: Այժմական նախարարը մասնա- ւոր թէքէքէքէով մը ուշադրութիւն հրաւիրած էր այս խնդրին վրա: Հաւաքումը ժամանակին յա- ուաջ տարուած չըլլալուն պատճառաւ, հին առ- նելիքներ մնացած են: Ուստիկաններ պիտի զըրկ- ւին տուրքի հաւաքման գործին մէջ մեղել ու թող զանուի, անոր մասին իսկոյն տեղեկութիւն պի- տի տրուի իր պետին»:

Անշուշտ այս հրամանագրին զօրութեամբ շատ հայեր պիտի լեցուին բանտերը: Հոս ալ երկու օր է 200-էն աւելի հայ ձերբակալեցին և լեցու- ցին բանտերը, ու օգը Պօլսի 35 աստիճան տա- րութիւն ունի:

ները տեսնում են իրանց եղբայրներին անկախ, ուստի ինչքան րէֆորմներ էլ որ տրվեն նրանց, նրանք միշտ ձգտելու են միանալ իրանց եղբայրներին հետ և լիակատար ազատութիւն ձեռք բերել:

Կ

«Express Agency» գործակալութիւնը հաղորդում է հետեւեալ հետաքրքրական լուրը.

«Հայաստանի կազմակերպութեան ծրագրի աւելի ուշադիր քննութիւնը Պարիզում և Պետերբուրգում առաջ է բերել գաղափարների մի նոր հոսանք: Սկսել են համոզվել, որ եթէ խնդիրը լուծվի ճիշդ այն կերպով, ինչպէս որ առաջարկում է Անգլիան, առաջ կը գալ մի անհաստատ վիճակ, որը կը ստիպի շուտով Ռուսաստանին միջամտել: Անգլիական գիւլոմատիայի եռանդը սկսել է պակասել: Ենթադրում են, որ ուսուցողական բացասական պատասխանը նրա առաջարկներին՝ կրէտէ կղզու ժամանակաւոր դրաման վերաբերմամբ այն դէպքում, երբ Ռուսաստանը իր կողմից կը գրաւէ Հայաստանը, կապ ունի այդ փոփոխութեան հետ»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԽՈՒՅՑ

Յունիսի 28-ին

խաղաղ կեանքը վերականգնել էր: Ամբողջ գիւղը տակն ու վրա էր եղել, ամենքին տիրել էր սարսափ և երկիւղ: Փողոցներում տիրում էր իրարանցում: Գիւղի այս կամ այն մասերում լսվում էին թաղապետներ և հրացանաձգութիւնների, որոնք աւելի ևս սաստկացնում էին սարսափի տպաւորութիւնը: Ընտանիքներում կանանց և երեխաների դուռն էր բռնել: Տղամարդկանց մի մասը զինված շտապում էր դէպի աղմուկի տեղը, իսկ միւս մասը կատարներէից էին մասնակցում:

Բայց ինչ էր այդ ամենի պատճառը: Գրաւ պատճառը օրվայ հերոս Նաբի աւազակն է, որը իր յանդուգն գործերով իր վրա է դարձրել ամենքի ուշադրութիւնը: Այս բանը ինչու՞ն է:

Յունիսի 26-ին, երեկոյեան դեռ նոր մթնած, Նաբիի ընկերներից տասը հոգի յարձակվում են Միսի թրքաբնակ գիւղի վրա և չորսպատու են մէկի տունը, որը երկու օր առաջ վերադարձած է լինում օտարութիւնից, կարծելով որ մօտը շատ փող էլ լինի: Այդտեղ են բերում մէկ-մէկ և գիւղի աղամարդկանց, որոնցից պահանջում են յայտնի գումար: Գիւղացիները սրանց պահանջները դիտմամբ այնքան ձգձգում, երկարացնում են, որպէս զի ուղարկած մարդը օգնութեան կանչի ֆաղաքիք և ճանակերտ գիւղերի կողակներին և ձիաւորներին:

Կողակների առաջնորդը շտապելով եղելութեան տեղը, մի և նոյն ժամանակ լրաբերին՝ մի տանակերտացու հետ, ուղարկում է Ագուլիս՝ հեռագրով Օրդուբաժի պրիստաւին յայտնելու եղելութեան մասին: Կողակների գալը լսելով, աւազակները թողնում հեռանում են, տանելով 300 ռուբլի: Աւազակների փոխարէն ձերբակալում ուղարկում են Օրդուբաժ երկու թուրքի, որոնք հաց են տանում եղել աւազակների համար:

Միջոցառ. այստեղ, Միսիում, այս դէպքն է տեղի ունենում, Ագուլիսում պատահում է հետեւեւալը: Լրաբերները հասնելով Ագուլիսի բազարը, որտեղ է և հեռագրատունը, կանչում են բազարի պահապանին յայտնելու իրանց ցանկութիւնը: Վերջինս ընդունելով նրանց աւազակների տեղ, և կարծելով, որ դա միայն խորամանկութիւն է նրանց կողմից, և իրան ուղարկելով հեռագրատուն, կամենում են յարձակվել բազարի վրա, մերժում է նրանց խնդիրը և պահանջում հեռանալ: Գրանք տեսնելով, որ պահապանը չէ կամենում լսել և հաւատալ իրանց, հեռանում են բազարի ետեղ, որտեղ քնած են լինում թուրք մշակները: Սրանց զարթեցնելով, խնդրում են, որ գնան բազար և կանչեն իրանց ծանօթ թուրք հացթուփին: Մշակները յայտնում են, որ բազար մտնել անկարելի է, պահապանը կը խփի: Լրաբերները հանդիպելով այս անաջողութեան, վճռում են իրանք քնալ բազարի ծայրը, թուրքի մօտ, որը և կատարում են: Բազարի պահապանը նկատելով այդ երկուսին բազարի մօտ, երկուսից խփում է, թէն չէ գիպում զենքով: Հրացանի ձայնին պատասխանում են գիւղի գիւրապանները, որից յետոյ տակն ու

վրա է լինում ամբողջ գիւղը: Տեղիս հեռագրատան կառավարիչը, կարծելով որ Նաբին է յարձակվել և երկիւղ կրելով պօստից, իսկոյն հեռագրում է պրիստաւին, որը կէս ժամից յետոյ իր օգնականի և մի քանի չափաւորների հետ հասնում է այստեղ, իսկ մի ժամից յետոյ էլ հասնում են ղեկավարները:

Սակայն մինչև նրանց գալը, ամեն ինչ արդէն պարզվել էր:

Ա. Գաւթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Լոնդոն, յունիսի 22-ին

Առաջիկայ յուլիս ամսին, ինչպէս «Տարազի» վերջին №-ում յայտնել ենք, «Տարազ» չը պէտք է լոյս տեսնի, որովհետև այդ ամսում հրատարակվելը ՆՆ-ը ամբողջապէս դարձրած է լինելով՝ առանց բացառութեան՝ հայկական խնդրին վերաբերեալ չքիզ պատկերներով, արդէն տպագրվում են Լոնդոնում: Այդ հրատարակութիւնը այն աստիճանին ձուլ պիտի լինի, և հետաքրքիր, որ աւելորդ ենք համարում կանխաւ հաղորդել մանրամասնութիւններ:

Տ. Նազարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 10-ին

Խօշիվանքի զերեզմանատանը տիրող անկարգութիւնները ամենքին յայտնի են. բայց մօտ օրերս ինձ վիճակից դրանցից մէկի ծանօթութիւնը իմ անձի վրա փորձել:

Մայիսի 28-ի առաւօտը եղբայրս գնում է և գերեզմանատան վերակացուն պատկերում, որ այդ գակնիս երեսայի համար գերեզման փորեն: Վերակացուն խոտատնում է: Երեկոյեան հանդուցեալին տանում ենք գերեզմանատուն ու... ոչ գերեզման կայ փորած, ոչ մշակներ են երեւում...

Վերակացու Արտիսանի ծուռ ու մուռ բացատրութիւնները չեն կարողանում ծածկել ակնյայտի անկարգութիւնը... իսկ երբ գերեզմանը փորում վերջացնում են և փողը վճարում ենք, վերակացուն ցինիկաբար իր արածը հետեւեալ խօսքերով է պատկում. «Ես գերեզմանը առաջուց չը փորել տալով կարողացայ ձեզանից երկու ռուբլի վերցնել, բայց եթէ դայիք և փութեք, պատրաստ տեսնելք» այն ժամանակ մի ռուբլուց աւելի չէիք տայ... Արդեօք այդ ուղբալի երեւոյթի վրա հոգեւոր վարչութիւնը ուժը չը պէտք է դարձնի:

Յարուլիւն Լախեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն հայոց կաթողիկոսի ճանապարհորդութեան մասին տեղական լրագիրները հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները: Յուլիսի 1-ին, Վեհափառը մեկնել է Թեօդոսիայից «Նիկոլայ» չորհրդաւով և անցնելով Վերջի վրայով, հասել է փոթի յուլիսի 3-ին, ժամը 3-ին կէսօրից յետոյ: Նաւամատուցում կաթողիկոսին դիմաւորեցին տեղական իշխանութիւնները, քաղաքի և հայ հասարակութեան ներկայացուցիչները և մատուցին ծաղիկայ փռած և աղ ու հաց: Փոթիում այցելելով եկեղեցին և մի քարոզ խօսելով կաթողիկոսը գիւրդակ Ժամը 12-ին մեկնեց դէպի Բօրթօմ և հասաւ յուլիսի 4-ին Միխայիլօ կաթարանը: Այդտեղից մեկնելով Բօրթօմ, Վեհափառը իշխանեց Կաթողիկոսի արքունի տան մէջ, Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլայէվիչի կալուածական գրասենեակի կառավարչի հրաւերով Բօրթօմում ամենայն հայոց կաթողիկոսը այցելեց Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլօվիչին, որը փոխադարձ այցելութիւն արաւ Վեհափառին: Գիշերելով Բօրթօմում, կաթողիկոսը երէկ, յուլիսի 5-ին, ժամը 10-ին մեկնեց Ալաշկալայ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստր Վիտտէ այս աշունը կանցկացնի Կովկասում, այն է Բօրթօմում:

Մեղ հեռագրում են, որ խմբապետ Կարա-Մուրզան Սթամբուլ մի քանի կօնցէրներ տալուց յետոյ, գնացել է Թէլաւ, իսկ այդտեղից գնալու է Ջալալօղլու և Նուրի նոյնպէս կօնցէրներ տալու համար:

Մի քանի օր հաղորդակցութիւնը Բաթումի և Թիֆլիսի մէջ ընդհատված լինելով, երկաթուղու գծի փչանալու պատճառով, Անդրկովկասեան երկաթուղին մի շաբաթվայ ընթացքում 220 հազար ռուբլի վնաս է կրել:

Հրատարակական ընկերութիւնը շարունակում է հետաձգել գրքեր լոյս ընծայել: Այս երկու օրս մամուլի տակից դուրս է եկել նրա № 92 հրատարակութիւնը, «Խնձորենիների երկրում» վերնագրով, Ուլդի հէքաթիւներից, մի գեղեցիկ և սահուն լեզուով թարգմանված գրքույկ ժողովրդական և պատմաինների ընթերցանութեան համար: Գինն է 10 կօպէկ:

Ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութեան աշխատակից անդամ Ե. Մարկովին յանձնված էր անցեալ տարի գարնան հետազոտել Սեւանի լիճը ֆիզիքական և աշխարհագրական կողմից, որպէս զի բացատրվի այն հանգամանքը, թէ որքան հնարաւոր է այդ լճի ջուրը դուրս դնել Եւրասիոյ նահանգի մի քանի տեղերը ջրելու համար: «Кавказъ» լրագրի խօսքով. Մարկով աւարտեց իրան յանձնած պաշտօնը անցեալ ամս և այժմ իր նկատողութիւնը տպել է աշխարհագրական ընկերութեան այս տարվայ տեղեկագրի մէջ:

Չը գիտեմ ինչին վերագրենք, արդեօք կրիտիկայի բացակայութեան, սանձարձակ յանդուսութեան, թէ ուրիշ շարաքառակ հանգամանքներն այն տխուր երեւոյթը, որ ներկայումս նշկաւում է մեր վիպական գրականութեան մէջ: Ամեն մի թերութեւ, ծխական դպրոցում մի երկու տարի ուսուցչութիւն արած համբալ մուսը է գործում հայ վիպական գրականութեան մէջ, ինչպէս մի բաց պարտիզի մէջ, և սկսում է վէպեր թխել, անշնորհք, անմիտք վէպեր, առանց որ և է իրենցից, առանց որ և է տէնդէնցիայի, առանց ծանօթ լինելու վիպասանութեան, հոգեբանութեան, լոգիկայի և նոյն իսկ հայոց լեզուի կանօնների և պահանջների հետ: Վիպասան անունը ժառանգելու ցանկութիւնը այնքան սաստիկ է այդ վէպեր թխող պարոնների մէջ, որ նրանք չեն խղճահարկում և մի քանի չեն մտածում, թէ որքան փչացնում են ընթերցող հասարակութեան էսթետիկական ճաշակը իրանց ափեղցիվով, վայրի-վերց գրութեանը: Այդպիսի մի գրութեան հանդիսանում է և այս օրերս մեր խմբագրութեան մէջ ստացված ոմն Բազարտ Ալաշկալայի «Տանջանքի բոլից» վերնագրով վէպը: Այդ գրութեան մէջ մի որոնք ոչ իրեն, ոչ տէնդէնցիա, ոչ միտք: Հեղինակը, որը, ինչպէս երևում է գրութեանը, ծանօթ չէ վիպասանութեան, գեղարուեստի և էսթետիկայի նոյն իսկ տարրական կանօնների հետ, կարծում է թէ բառական է վեր առնել կեանքից մի իրական դէպք և համեմելով նրան զանազան դատողութիւններով, խորհրդածութիւններով, արուեստական և անքանական խօսակցութիւններով, ահա պատրաստ, թխված կը լինի մի վէպ: Նախ քան իրական կեանքից վէպ գրելը, Բազարտ Ալաշկալան, ինչպէս երևում է գրքից, ձեռնարկել է և պատմական վէպեր գրել՝ «Աշոտ Նրկաթ», «Անիի կործանումը» վերնագրով: Չը բառականաւորով դրամով, նա այժմ իրան այնքան բարձր է դրում, որ հոգեբանական վէպեր ևս կամենում է գրել և կատարելապէս «տանջում է» թէ խեղճ հայոց լեզուն, թէ վիպասանութեան անունը և թէ ընթերցողներին:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեղ գրում են. «Երէկ, յունիսի 16-ին, տեղի ունեցան ծխականների ժողով: Յայտնի է, որ պատգամաւորների նիստում որոշվեց, որ Աստախանը կարող է յատկացնել յօդուտ նոր բացվելի սեմինարիայի 4,000 ռուբլի: Ներկայ ժողովում միաձայն վճռվեց յատկացնել զարդին ոչ միայն այդ 4,000 ռուբլին, այլ և եկեղեցական գումարների ըլող մնացորդները, որ կը գոյնան ըլող անհրաժեշտ ծախսերը հանելուց յետոյ: Եւ եթէ աչքի առաջ ունենանք, որ մեր եկեղեցական գումարները ամէն տարի աւելանում են և թէ որ սպաքալում նրանք կաւելանան, քանի որ որոշված է եկեղեցական գումարները անշարժ կալուածքների վերածելու ուղղակի է, որ այդ 4,000-ը հանդի աւելի նոյն իսկ 6,000 կամ 7,000 ռուբլու, մի գումար, որ կը լրաց-

նէ դպրոցի կէս ծախսը: Նոյն ժողովում յարուցվեց շարաքաղք քահանայական խնդիրը: Աւելորդ ենք համարում առաջ բերել մանրամասնութիւնները, այդքանը կասեմք, որ այդ հարցը ցանկալի վախճան ունեցաւ, և անկասկած խորէն եպիսկոպոս Ստեփանէի օրով ոչ մի տգէտ չէ կարող քահանայական կոչում ընդունել»:

ՂՈՒԲԱՑԻՑ մեղ գրում են. «Յանքսերը խոտատնում են լաւ հունձ: Գեռ անցեալ տարվանից ցորեն չատ կայ և ծախվում է շատ էժան,—40 կօպ, պուղը»:

ՂԱՋԱԽԻ գաւառից հաղորդում են, որ այնտեղի գիւղերում այս տարի անաջող է եղել շերամպահութիւնը: Գիւղացիները բացատրում են այդ հանգամանքը երկու պատճառով, նախ՝ որ գարունը շատ անձրեային և ցուրտ լինելով՝ թերթնու տերեւները փչացան, երկրորդ՝ չերամի սերմը վատ տեսակիցն էր, և որդերը՝ հաղիւ սերմերից դուրս եկած՝ փչացան:

ՂԱՋԱԽԻ գաւառի Չամբարակ գիւղից մեղ գրում են, որ այնտեղ տաւարի հիւանդութիւնը շարունակվում է: Չամբարակ և հարեան մօլօկանների Միխայիլօվա գիւղերում կոտորվել է մինչև այժմ մօտ երկու հազար գլուխ անասուն: Երկիւղ կայ, որ հիւանդութիւնը անցնի և ուրիշ գիւղեր, թէն հրամայված է տաւար չը տեղափոխել գիւղից գիւղ:

ԴԻԼԻՋԱՆԻՑ գրում են, որ այնտեղ ամառանոց եկողների թիւը շատ մեծ է այս տարի: Հասարակական կուրը ստանում է կովկասեան լրագիրներ և հրաւիրել է կովկասեան զօրադնդի նուազախումբ: Դիլիջանը իբրեւ ամառանոց մեծ նշանակութիւն ստացաւ խօսքայի տարվանից, որովհետև աղատ մնաց այդ հիւանդութիւնից ըլողովին:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեղ գրում են. «Խորէն եպիսկոպոս Ստեփանէն յունիսի 27-ին Աստախանից գնաց Պետրօվսկ-Գորոնա, որտեղ պէտք է օծի եկեղեցին: Այդ եկեղեցին թէն չինված է Գեղրդ եպիսկոպոս Վեհապետեանի օրով, բայց ոչ մի առաջնորդ մինչև այժմ յանձն չէր առել գնալ օծել, եկեղեցու աղքատութեան պատճառով: Պետրօվսկում խորէն եպիսկոպոսը կը սպասի սինօդի անօրէնութեան»:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈՒԳԱՌԱՑԻՑ

Վարնա, յունիսի 19-ին

Վարնայի հայ քնակիք ի միթինկ գումարուելով այսօր, 18/30 յունիս 1895, իրենց ս. եկեղեցու չորհրդակցին մէջ, ընդ նախագահութեամբ արք. տէր-Յովնան Մանգակունի հօր, ի նկատի տալիս վարչական բարենորոգմանց ծրագիրն, զոր թրքահայաստանի համար պատրաստած են Կ. Պօլսոյ ուսանական, անգլիական և ֆրանսական վսեմ. դեսպանը, և որոյ պարունակութեան վրա որոշ դադարաւոր մը տուած են եւրօպական մամլոյ հրատարակութիւնը: Այս հրատարակութիւններէ կը տեսնուի, թէ վերջիւեալ ծրագիրը ոչ միայն շատ հեռի է հայկական վարչութիւն մը տալէ այն նահանգներուն, ուր պիտի ներմուծուին ծրագրեալ բարենորոգումքը, այլ և անոնց կուտայ պարզապէս թրքական երկրի մը դրոշմը, անոնց վարչութիւնը ըստ առաջնոյն յանձնելով Բ. Գրան կարգելի և հետեւաբար նմա պատասխանատու պաշտօնէից ձեռքը:

Արդ, նկատելով որ թիւրքահայոց թշուառութեան գլխաւոր պատճառն այն կանխամտածեալ քնաչնջման գործիւնն է, որում շատ տարինեք ի վեր թիւրք կառավարութիւնը գիտակցաբար կը հետի հայոց նկատմամբ և որոյ վերջին անվիճելի ապագայն է Աստուջ կազմաւորեալ ընդհանուր կոտորածը, զփոխալին և ահաւելի ոճրազորութեանց այդ անօրինակ շարքը. և այս մի և նոյն կառավարութեան արին մէջ դարձեալ սեղմեալ մնալու կը դատաբարտուին ապագայում հայուն ապագան ու ձախտագիրը:

Նկատելով որ այն արդար օրէնք և իմաստուն կանօններ, զորս դեսպանական ծրագիրը կը պարունակէ, ըստ իրենեան բաւական չեն ապահովելու հայոց կեանքը, պատիւը, ինչքը և զարգա-

հաշու աղատությունը, այլ բուն և էական խնդիրը այդ օրինակ ճշգրիտ գործադրությունն է, զոր սակայն, ինչպես ցարդ եղած փորձերը անվտանգ լի կերպով կը հաստատեն, անկարելի է սպասել մասնատված և ուղի իսկ քրիստոնեայ պաշտօնէից զարմանեալութենէն, երբ սոքա կարգուած են Բ. Կոնստնտին և երբ երկրին տիրապետող տարրն է թիւրքը, ոչ կը օրինական խորին համադրուի, քաղաքական հայեացքն և արմատացած բարքերն են և պիտի մնան միշտ անպարտելի արգելք՝ քրիստոնեայ և իսլամ քաղաքացւոց հաստատութեան վրա հիմնեալ ամեն օրինաց և բարեկրթութեանց կիրառութեան: Սոցա անհաշտ թշնամի իսլամական մոլեռանդութեանց վկայ են ձեռնարկ և ուղի իսկ Կ. Պոլսոյ մէջ պատահած արեւմտեան ղեկավարն, ի Մուշ եւրոպական քննիչ յանձնաժողովի անդամաց ղեմ եղած անարգանքն և այլն, սրբ տեղի ունեցան թիւրքից քաղաքական կացութեան մի ամենախիստ վատնալի մէջ, ուր իսլամ տարրը արեւմտեան պէտք ունէր ծածկելու իր հակաքրիստոնեական ոգին, եթէ երբեք ոչ և է նկատուած իրան կրնայ զայն, երբ մի անգամ բարբառի, ի հանդէս գալու արգելի:

Նկատելով որ թիւրքից մէջ չեն պակսեր արդէն լաւ օրէնքներ, որոց ճշգրիտ կիրառութիւնը եթէ արեւելեան չը հանդիպէր, թիւրքից քրիստոնէից վիճակը երկար ժամանակէ ի վեր բարուրած պիտի լինէր և օսմանեան պետութիւնը հետզհետէ չը պիտի կորսնցնէր այնքան ընդարձակ և բարգաւաճելու ընդունակ նահանգներ:

Նկատելով, որ բարձր բոմբէրի պաշտօնին, բարձր խառն յանձնաժողովն անդամակցութեան և վարչութեան կողմէ անձնաւորութեանց մասին, ըստ պահանջման դեպքանական ծրագրին, Բ. Կոնստնտին եւրոպական տէրութեանց հաւանութիւնը առնելու պարտականութիւնն բաւական երաշխաւորութիւն մը չէ բարեկրթութեանց իրական կիրառութեան, որ, ինչպէս առաջին և երկրորդ նկատուածութեանց իմաստն կը հասկցուի, կախում չունի միայն սակաւակիւ հարձրագոյն պաշտօնէից կամքէն, եթէ մինչև բարձրագոյն պաշտօնէից կամքէն, եթէ մինչև իսկ երկրորդին, որ նոքա շատ բարի կամեցողութեան տէր անձնաւորութիւններ լինեն:

Նկատելով որ վերջին տարիներ թիւրքահայոց կրած անասելի չարքներէն յետոյ ըստ ինքեան դիւրահասկնալի է, որ այսօրեան հայ և թիւրք ազգութիւնը չը պիտի կրնան իրարու հետ սիրով ապրել, քանի թիւրքը պիտի մնայ միշտ տիրապետող տարրն, որոյ մոլեռանդութիւնն և ատելութիւնը ընդդէմ հայոց սաստիկ գրգռված է եւրոպական տէրութեանց միջամտութեան պատճառաւ ի նպատակ հայոց: Իսլամաց այս գրգռութիւնը մէջ կողմէն, խողովող հայ մանկանց, անպատու հայ կանանց, քառամեկ տանջանաց մէջ սպաննեալ հայ արանց և եկեղեցական սրբութեանց պղծման թաղման իշխանակը հայոց սրտերու մէջ միակողմէն կը սպառնան զայնպատան նորանոր անկարգութեանց ու աղետից հանդիսարան դարձնելու վերաբեր:

Նկատելով վերջապէս, որ հայոց իրձը ու դիտումը չէ բնաւ օսմանեան կայսրութենէն բոլորովին անհաշտ և անկախ պետութիւն մը կազմել, այլ մարդկային ամենէն տարրական իրաւունքները, այն է կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւնը, զոր իրենց կը խոստանայ Բեռլին դաշնագրին 61-ը յօդուածը, արդեամբ վայելել, և այս կարելի է միայն թիւրք տարրին ազդեցութիւնը չեղծեցնելով Հայաստանի վարչական կազմաւորութեան մէջ՝ ի ձեռն եթէ ոչ հայ, գոնէ եւրոպացի և եւրոպական տէրութեանց համարաւոր վարչական պաշտօնէից:

Միթիւնը որոշեց. Կիսմէ Կ. Պոլսոյ ամենապատիւ սրբազան պատրիարք հօր և խոնարհաբար աղաչել իրեն որ յուն թիւրքից հայոց բողոք բառնայ առ որ անին է, դիտարկան Ժողովին այն մասերուն դէմ, որ բնաւ հայոց օրինաւոր պահանջները և պէտքերն չը պահանջու ընտելին չունին, և ինչպէս եւրոպական տէրութիւններէն, որ հաճին թիւրքահայոց անտանելի կացութեան վերջ մը տալու համար գէթ եւրոպական վարչութիւն մը հաստատել Հայաստանի մէջ, եթէ երբեք քաղաքական հանգամանակները որոշեց:

հայ բերամբ անկարելի նկատեն երկրը օժտել հայկական վարչութեամբ մը:

Միթիւնի նախագահին յանձնուած է այն որոշման գործադրութիւնը:

Նախագահ միթիւնի
Յովհ. քահ. Մանդակունի

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

ԿԱՐԹԻՒՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

(Հանգուցեալ երկրիւրեան Պարոնեանի յայտնած կարծիքները կանանց մասին)

Կը զարմանամ թէ կիներն ինչպէս կրնան քաղաքի մը մէջ իրենց բոլոր մեղքերը պատմել խոստովանալով բանալիներ:

Աղջիկները սեխի կը նմանին, որքան ծանր ըլլան, այնքան անուշ կը լինեն և այնքան չուտ և սուղ կը վաճառուին:

Կիներու համար ամեն օր բարեկեցութիւն է, որովհետեւ ամեն օր դիմակաւոր են:

Եթէ քիմիաբան մը փորձի համար կին մը տարրալուծէր՝ հետեալ արդիւնքը պիտի գտնէր.

Արտաստիք	20
Քրքեր	10
Գոռոգութիւն	10
Օ աղ քօլօնէր	9
Նախանձ	15
Լալանտա	7
Ուղեղ	1
Կարմիր որդան	4
Սալոր	8
Բաւաւաւոր	12
Պարապ խօսք	4
	100

Ապուշի մը գեղեցիկ աղջիկ տալը գոմէնի վրա վարդ պատուածութեամբ կը նմանի, չը բռնէր:

Սէրն ալ ճիշդ գինիի պէս է. երբեք ալ կայ, երբեք ալ, անուշէն ալ կը դառնուի, կծուէն ալ է որ հինարով աւելի պատուական կը լինայ և է որ երթալով քացալ կը դառնայ:

Գեղեցկութիւնն անանկ պտուղ մըն է, որուն հոռն աւելի սիրով և անորոշակով կուտուի, և որ շատ հասունացուն պէս կը փտտի:

Կիները գեղեցկութիւնն իբրեւ տաղանդ կը բռնեն. տգէտ բառին դէմ կը զայրանան, իսկ տգէտ բառին վրա միայն կը ծիծաղին:

Անհաւատարմ ամուսնութիւններու մէջ երկին ան ուն է, իսկ սիրականը գեղեցիկ է:

Ան կիները որ աղուոր և սակայն պաղ են, կը նմանին այն ձեռագիրներուն, որոնց գիրերը գեղեցիկ են, այլ նիւթն անհաւ:

Բարեկրթ կնոջ մը հետ կենակցելու համար քիչ մը չորաքորթութիւն անհրաժեշտ է. ինչպէս որ շատ ոգի պտուղանալով հին գինի խմելու համար անոր մէջ ջուր դնել պէտք է:

Արդարեւ աղջկան մը ինչ վարուց տէր ըլլալն անոր դէմքին վրայ գրուած է, բայց ափսոս որ բեռնաւոր է և ամեն մարդ իւր ուզած կերպով կը կարգայ զայն:

Սէրն բաղաձայն է, ինքնիւրմէ ձայն չը հաներ, մինչև որ քովը չը դուրի նախանձը:

Համբոյները սիրոյ քերականութեան միջակէտներն են:

(Շաղիկ)

“ՄՇԱԿԻ” ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐ

ՌՈՒՄՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 4 յուլիս: Իշխանուհի Կէսիմա Ա. Էքսանդրովնա յուլիսի 3-ին, երեկոյեան, բարեկաջող կերպով մի աղջիկ ծնեց, որին առաւ և իրենա անունը: Օգտաւիտ. Իշխանուհի և Բարձր Նորաձին առողջութիւնը կատարելապէս բաւարար է:

Կ. ՊՈԼԻՍ, 3 յուլիս: Ասում են, որ Կրիտ կղզում ալ իշխան յունաց հրոսակաւները: Զօրքեր են ուղարկված:

ՍՕՖԻԱ, 3 յուլիս: Բալկանեան գործակալութիւնը հարգում է, որ Սոֆիանովի առաջնորդութեամբ Ֆիլիպպոլից եկած զօրաբաժինը գինա-

թափ է եղած և ցրված: Սոֆիանով և կամաւորներից շատերը, որոնք զինուորված էին Մանլի-խէրի հրացաններով, կալանաւորված են: Կարծում են, որ զօրաբաժին համար զէնքերը հայկահայկել է Ստամբուլ, որը միևնույն-նախագահ եղած ժամանակ ձեռք բերած ունէր հրացանների մեծ քանակութիւն:

ՍՕՖԻԱ, 4 յուլիս: Զօր մարդիք, զինուորված զայրուներով և իշխաններով, յարձակեցին երէկ երեկոյեան Ստամբուլի վրա, որը կուրբի տուն էր վերադառնում: Ստամբուլի մի քանի վերքեր հասցրին զլուծ: Վիրաւորվածի դրոշմները, ըստ երկրորդին, շատ վտանգաւոր է: Արեւի կորուստը անագին է:

ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲՅՈՒՄՈՅ

Յուլիսի 4-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	93	—	4.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45	»	45
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36	»	82 1/2
Ռուսի . . .	7	»	40
Մաքսային կուպոններ . . .	148	»	—
Արծաթ . . .	—	»	—
Բօրային դիսկոնտ . . .	5	»	7 1/2
Պետ. բանկի 5% օտոմ 1 շրջանի . . .	—	»	—
— — — — — 2-րդ . . .	—	»	—
— — — — — 3-րդ . . .	—	»	—
4% պետական ռենտա . . .	99	»	50
5% ռենտա ռենտա 1894 թ. . .	164	»	—
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	—	»	—
— — — — — 2-րդ . . .	—	»	—
— — — — — 3-րդ . . .	—	»	—
— — — — — 4-րդ . . .	—	»	—
Էրբիլ 5% առաջին փոխառութ. . .	253	»	—
— — — — — 2-րդ . . .	231	»	—
5% պետական երկաթուղ. ռենտա . . .	101	»	50
4% Էրբիլ փոխառութեան . . .	98	»	75
4 1/2% օրաւ. թղթ. աղ. կալ. բանկի . . .	101	»	—
Աղ. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	—	»	—
Գրաւ. թղթ. . .	211	»	50
4 1/2% վկայակ. գնդ. հող. բանկի . . .	101	»	—
4 1/2% օրաւ. թղթի կալուած. . .	—	»	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. . .	—	»	—
— — — — — թղթաղ. . .	—	»	—

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրինաւորները. 100 » 25
Մոսկույի քաղաք. օրինաւորները. 101 » —
Օդեսայի . . . 100 5/8 » —
Թիֆլիսի . . . 99 5/8 » —
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . . 101 » —
— — — — — ֆուլթայիս . . . 101 » —

Խաղաղի՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻԿ-ԱԼԱՍՏԱՆՍ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսուցչական ինստիտուտը աւարտած և 6 տարի հայոց դպրոցներում ծառայած ՄԻՌՍՈՒՅԻՉ ցանկանում է աւագ-ուսուցչի կամ ուսուցչի պաշտօն ունենալ հայոց դպրոցներում:

Հասցէն. Մշակի խմբագրատուն, Միւրբու-մեանցին: (№ 76) 1—3

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ
Գրիգորի և Երզնկեանցի
վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում:

Գինն է 1 ռուբլի: (№ 76) 1—2

ԱԶԴ
Նախընտրի ծխական դպրոցի գրադարանի օգուտն ստացան Կ. Ռէյտերից 32 դիրք. 2. Մ. Մ. 30 դիրք. Եջմիածնից 16 դիրք և այլ անձերից 27-ը դիրք, ընդամենը 105 դիրք, որոնց համար դպրոցի ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ բոլորին շնորհակալութիւն յայտնելով, սրանով մի անգամ ևս խնդրում է ձեռնհաս անձանց նուիրել մանկական-ժողովրդական գրքեր Թիֆլիսի վիրաւօս թաղի դպրոցին հետեալ հասցէով՝ Тифлис. Навтлугъ. Арм. училище.

1—1

ԿԱՇՈՒԷ ԱՊՐԵՏՈՐԻԱ ԿԵՕԼԵՐԻ
կամ այսպէս անուանված “ԿՕՇԿԱՆԵՐԿ ԿԱՅՄԱԿ”, փԱՅԼՈՒՆ ԼԱՔ և այլն, ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ Նշանաւոր առեւտրականների մօտ:

Հրաշալի միջոց կաշին սև և հաստատ փայլ տալու և խոնաւութիւն չանցկացնելու համար:

Անփոխարինելի է կանանց կոշիկների համար, որովհետեւ չէ կեղտոտում և շո-րերը չափ զեղեցիկ նորոգում է և պահպանում է ամեն տեսակ կաշուէ ապրանքներ, ինչպէս սակիջաժներ (մինչև անգամ պօրտմենէ), ձիւռ սաքը, զինւորական ամուսնի-ցիայի կաշուէ առարկաներ, կառքեր և այլն: Գինը չափազանց էժան է:

(№ 76) 1—2

ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ազգային լիակատար երգարանի առաջին հատորը, չորրորդ հրատարակութեամբ, որ տպագրվում է Մոսկույում, լոյս կը տեսնի յուլիսի վերջին: (№ 76) 2—3

ԲՈՇԿԱՊԵՏ ԱԻՆՏԻԲ ԲԱՐԱՅԵԱՆԻ
բացակայութեան պատճառով
Նրա

ԶՐԱ-ԷԼԷԳԻՏՐԱԿԱՆ

ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ
(Սօլսակ, Սերգիեյի փողոց, № 14)

Ամառվայ ընթացքում հիւանդներին կըն-դունի

ԲՈՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑ

կանանց և ջրային հիւանդութիւն-ներ

Ամեն օր, 1—2 Ժ. ցերեկվայ և 7 Ժամ երեկոյեան

Բուժարանում, բացի էյէքտրական վան-նաներից, դուշերից, բժշկական մարմնա-մարզութիւնից—կին հիւանդների մասած, որի համար ընդունելութեան ժամերին ներկայ են ինում կին և տղամարդ մաս-ժիտներ. —մասածիստ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ և կին մասածիստ ԿՐԱՆԿԱՎԱՅԱՆ: (№ 71) 6—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
“ՏԱՆԶԱՆԻԲ ԲՈՎԼԻՑ”

վէպը: Գինն է 30 կոպ.

Նոյն հեղինակի՝ «ԱՇՈՏ ԵՐԱՊ» պատմական վէպը, 2 գրքից բաղկացած, գինն է 1 ռ. 50 կ.

Գինը՝ Тифлисть, Баграду Айвазянцу: (№ 76) 2—2

ДАЮ УРОКИ

армянского, русского и французского языковъ. Бѣднымъ БЕЗПЛАТНО.

Адресъ: Садовая улица; № 64.

Տալիս եմ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուների ԴԱՍԵՐ: Զբաւորներին ԶՐԻ:

Հասցէն՝ Սօլսակ, Սաղաւաղ փողոց, № 64: (№ 76) 2—5

ԿԱՐ ԱՆՈՂ ՄԻ ԿԻՆ ցանկա-նում է Աբասթուան կամ Բորժոմ ամառա-նոց քիսոցով մի ընտանիք մտնել: Ցանկացողը կարող է դիմել այս հասցէով:

Անշխատի փողոց, Պարոնի տուն, № 22: (№ 69) 3—3

ԼՈՒՄԱՅ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆԻՑ

Գինն է 60 ԿՊ.

Գինը այս հասցէով՝ Тифлисть, Типо-графия Главногоначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:

(№ 64) 3—5

ԼՈՒՄԱՅ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆԻՑ

Գինն է 60 ԿՊ.

Գինը այս հասցէով՝ Тифлисть, Типо-графия Главногоначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:

(№ 64) 3—5

ԼՈՒՄԱՅ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆԻՑ

Գինն է 60 ԿՊ.

Գինը այս հասցէով՝ Тифлисть, Типо-графия Главногоначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:

(№ 64) 3—5

ԼՈՒՄԱՅ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆԻՑ

Գինն է 60 ԿՊ.

Գինը այս հասցէով՝ Тифлисть, Типо-графия Главногоначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում:

(№ 64) 3—5